Ապստամբություն՝ մանիֆեստ ժամանակակից ասորի արվեստագետների համար

Ես հնաոճ եմ՝ յուրօրինակ արվեստ ստեղծելու իմ ցանկությամբ: Ստեղծագործելիս ես ինձ մենակ եմ զգում, բայց ոչ միայնակ: Ասորական ծագմամբ արվեստագետները պետք է նոր մտածողություն ներշնչեն և արվեստի ստեղծման միջոցով հակադարձեն ձուլմանը: Ստորև ես ներկայացնում եմ իմ առաջարկներն՝ ի աջակցություն համաշխարհային ճանաչման ձգտող ասորիների կողմից ստեղծված նոր ժամանակակից արվեստի:

1. Մենք մերժում ենք հնագույն արվեստի ուղղակի կրկնօրինակումը՝ ինքնարտահայտվելու կամ ստեղծագործական արդյունքի հասնելու նպատակով:

2. Մենք մերժում ենք այն նեղմիտ հայացքները, որոնք գերադասում են արվեստի և գեղեցկության եվրոպական ավանդական արտահայտչաձևերը աբստրակտ արվեստի փոխարեն:

3. Մենք մերժում ենք պարզամիտ արվեստը: Եթե այն չի օգնում հասնել պրակտիկայի բարձրագույն մակարդակին, ապա պետք չէ հետևել դրան:

4. Մենք մերժում ենք, որ եղել ենք, և վերահաստատում, որ կանք:

5. Մենք ընդունում ենք, որ այլ աշխարհիկ մշակույթները փոխառելը, ներդնելն ու հարգելը մեզ միայն ավելի ուժեղ է դարձնում: Զբաղվեք արվեստով իր ամբողջության մեջ, այլ ոչ միայն ասորականով:

6. Մենք ընդունում ենք այն գաղափարը, որ արվեստում ազգայնականությունը նման է արևին. շատ մոտեցիր և կվառվես, շատ հեռու մնա, և կմրսես:

7. Մենք ընդունում ենք, որ արվեստը կամուրջ է, որն ասորիներին կապում է աշխարհին, իսկ աշխարհն՝ ասորիներին:

8. Մենք ընդունում ենք, որ խելահեղ և գույնզգույն գուլպաներ կրելը ստիպում է մեզ ավելի համարձակ և անկանխատեսելի զգալ՝ ուղղորդելով դեպի չբացահայտված մի աշխարհ և իր հետևից բերելով մեծ հաջողություններ կյանքում:

9. Արվեստ ստեղծելիս մենք փնտրում ենք գեղեցկություն, պարզություն և վարպետություն: Եթե մենք չունենք այն, ապա հորինում ենք: Մենք խորապես հավատարիմ ենք յուրօրինակությանը:

10. Մենք տարածում ենք արվեստը մարդկային փորձառության բոլոր չորս անկյուններում՝ հոգևոր, ֆիզիկական, զգացմունքային և մտավոր:

Արվեստն ու անմահությունը քայլում են միասին՝ ձեռք ձեռքի տված:

Ստորագրված

Ռաբել Բեթշմուել